

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2018թ.

N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 87-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկից «Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված 90.0քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել երկու տարի ժամկետով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկից «Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված 90.0քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել երկու տարի ժամկետով:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Նշված շենքի 4-րդ հարկի 90.0քմ մակերեսով տարածքը Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 25-ի հ.423-Ա և Երևանի քաղաքապետի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի հ.3936-Ա որոշումների հիման վրա, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է «Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Որոշումների հիման վրա ընկերության հետ կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում: Նշված պայմանագրի գործողության ժամկետը 2017 թվականի դեկտեմբերի 1-ին ավարտվել է և ներկայումս ընկերությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ զբաղեցրած տարածքի նկատմամբ օգտագործման իրավունքի ժամկետը երկարաձգելու խնդրանքով:

«Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայաստանյան քաղաքական դաշտում գործող առաջատար օրաթերթերից մեկն է, որը տպագրվել է 2008 թվականից, ունի մեծ տպաքանակ և տարածվում է ողջ հանրապետությունում: Թերթի համանուն՝ hrparak.am կայքը գործում է 2008 թվականից, որն ունի մեծ թվով հետևորդներ և բազմաքանակ դիտումներ: «Հրապարակ» օրաթերթը մեծ ուշադրություն է դարձնում մայրաքաղաքի խնդիրներին և գրեթե ամենօրյա հրապարակումներ անում Երևանում կատարվող իրադարձությունների, ինչպես նաև Երևանցիներին հուզող հարցերի վերաբերյալ:

Հաշվի առնելով ընկերության գործունեության ուղղվածությունը, կարևորությունը մեր հասարակության համար, ունեցած հեղինակությունն ու բազմամյա աշխատանքային փորձը Հայաստանի լրատվական, հասարակական և քաղաքական բնագավառում, ինչպես նաև համանման դեպքերում կազմակերպությունների մասով ձևավորված մոտեցումը՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին»
որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում
փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ